


Պարտատոմսի գնում Ուղեցույց



Պարտատոմսի գնում




1

Բանկի կողմից թողարկված պարտատոմսերը ձեռք բերելու նպատակով անհրաժեշտ է մուտք գործել «Ներդրումներ» բաժնի «Արժեթղթերի շուկա» ենթաբաժին և սեղմել «Առաջնային շուկա» կոճակը: «Առաջնային շուկա» ենթաբաժնում ցուցադրվելու է բանկի կողմից առաջնային շուկայում տեղաբաշխման ենթակա պարտատոմսերի արժեթղթի արժույթը, տեղաբաշխման ծավալը, սկիզբը և վերջը:


2

Գործող առաջարկների ցանկից անհրաժեշտ է ընտրել ցանկալի պարտատոմսը, ծանոթանալ պարտատոմսի գնման պայմաններին և իրականացնել պարտատոմսի գնում: Գործընթացը իրականացվում է 24/7 սկզբունքով, այն է պարտատոմսի գնում և գումարի գանձումը իրականացվում է նաև ոչ աշխատանքային ժամերին: Նման դեպքերում պարտատոմսի տեղաբաշխման գինը հավասար է հաջորդ աշխատանքային օրվա կտրվածքով պարտատոմսի համար սահմանված գնին:



Կարևոր!

- Եթե պարտատոմսերի գնորդը չունի դեպոզիտարիայում գրանցված եկամտային հաշիվ և ընթացիկ հաշիվ Բանկում, ապա «Գնել» կոճակը սեղմելուց հետո ծրագիրը ավտոմատ կառաջարկի բացել համապատասխան արժույթով ընթացիկ հաշիվ Բանկում: Միայն հաշիվը բացելուց հետո ծրագիր թույլ կտա շարունակել պարտատոմսի գնման գործընթացը:
- Եթե պարտատոմսերի գնորդը չունի դեպոզիտարիայում իր անունով բացված արժեթղթային հաշիվ, ապա «Գնել» կոճակը սեղմելուց հետո ծրագիրը ավտոմատ կառաջարկի բացել արժեթղթային հաշիվ: Միայն հաշիվը բացելուց հետո ծրագիր թույլ կտա շարունակել պարտատոմսի գնման գործընթացը:



Պարտատոմսի գնման հայտի մուտքագրման էջում ցուցադրվելու են հետևյալ դաշտերը՝

- Արժեթղթի հաշվեհամար - ավտոմատ ցուցադրվում է դեպոզիտարիայում առկա արժեթղթային հաշիվը: Խմբագրելի չէ:
- Ելքագրվող հաշվեհամար - ցուցադրվում է գործող ընթացիկ հաշիվների ցանկը: Անհրաժեշտ է ընտրել այն հաշիվը, որից պետք է ելքագրվի պարտատոմսերի գնման համար Նախատեսված գումարը:
- Բանկային հաշվեհամար - ավտոմատ լրացվում է դեպոզիտարիայում գրացված համապատասխան եկամտային հաշիվը, եթե վերջինս առկա չէ, ապա ցուցադրվում են ընթացիկ հաշիվների ցանկը, որից պետք է ընտրել:
- Տեղաբաշխման գին - ցուցադրվում է պարտատոմսի տեղաբաշխման գինը: Խմբագրելի չէ:
- Արժույթ - ցուցադրվում է պարտատոմսի արժույթը: Խմբագրելի չէ:
- Քանակ - անհրաժեշտ է մուտքագրել գնվող պարտատոմսերի քանակը:

Դաշտերը մուտքագրելուց հետո անհրաժեշտ է ծանոթանալ ձեռքբերման վերջնական պայմաններին, թողարկման ազդագրին, ավանդների երաշխավորման փաստաթղթին և սեղմել «Շարունակել» կոճակը:

«Շարունակել» կոճակը սեղմելուց հետո ծրագիրը տեղափոխում է գնման գործարքի հաստատման էջ, որտեղ անհրաժեշտ է հաստատել գործարքը՝ մուտքագրելով PIN կոդ կամ կենսաչափական տվյալներով: